

ՔԱՆՈՒՄՆԵՐԻ ԱԳՐՈՒԹԻՒՆ
 ուղարկող համար
 Տարեկան 12 Ֆր.
 Վեցուսեայ 6 »
 բնասանական համար Տարեկան 15 »
 Վեցուսեայ 8 »
 Անդրկարի համար
 Տարեկան 3 Ֆր.
 Վեցուսեայ 1.50 »
 ԳԱՆՏԻԿՆԻ ՎՆՈՒՄ

Մանուկներու սուր աստիճան
 երեսին համար 40 սանթիմ
 և իսկ վերջին անգամ համար
 20 սանթիմ և երեսին
 անգամ անհատ համար
 20 ՕՊ զեղջ կրչայ :

Պուշկարիոյ համար ձեռքի
 (15 ՄԱՅԻՍ)

ՇԱԲԱԹ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹ ԶՈՐԵՔԵԱՐԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՈՐԵՐԸ

Отговорникъ: Д-ръ Т. Страновъ

Մանուկ և սուր սրտի
 Խորագրերու և հասցի

Редакция на вѣстникъ
 «Шаржумъ»
 Варна.

Redaction du journal
 «Charjoum»
 Varna (Bulgarie)

Մուսուսանական համար ձեռքի

(20 ՄԱՅԻՍ)

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Պուրկազ, մեզի նամակ գրողին. — Անցիալ օրերը ցույց տվին նամակ մը գրած էիք բնականորէն մը մասին. եթէ ձեր գրածները ճիշդ են, կը խնդրենք որ միևնոյն բանը գրելով ու ձեր ստորագրութիւնը Թաղապետ Խորհուրդի միջոցաւ վաւերացնելով մեզի հասցնէք փութով որ մենք ալ պէտք եղածը ընենք :

ՎԵՐՋԸ

Օրմանեան երկրորդ հրատարական էլ յետ ընդունեց. Սուլթանը կրկին խոստացել է մի քանի շնչին դիւրութիւններ տալ հայ ժողովրդին, այս անգամ օրինաւոր և գրաստ կերպով : Իսկ ո՞ր հային, ո՞ր փոքր իշատէ քաղաքակրթւած մարդին յայտնի չէ թէ Սուլթանի գրաւոր և բերանացի խոստումները զէրօյի նշանակութիւն չունին այն դէպքերում, ուր այդ խոստումները իրագործել տալու համար թնդանօթով և տանեակ հազար հրացաններով սպառնալիք չըկայ :

Սուլթանը իբրև միապետ՝ աշխարհի վրա առաջին ստախօսի և խոստանալանցի դիպլոմը շատ վաղուց է որ ստացել է, և մենք շատ ոչխարամիտ պէտք է լինենք որ հաւատանք այդ հաշակաւոր թագաւոր ստախօսին : Արդեօ՞ք Օրմանեան հաւատաց և այդ պատճառով ընդունեց, կասկածում ենք :

Այսօր միակ աչքի զարկող իրողութիւնը այն է որ Օրմանեան համաձայնվել է շարունակել իր պատրիարքական պաշտօնը. արդեօք, թէ Օրմանեանի և թէ ժողովրդի համար, աւելի շահաւէտ և պատւաբեր չէ՞ր լինի որ Օրմանեան ազատ համարձակ յայտարարէր այդ թագաւոր ստախօսին՝ Սուլթան քանի որ դուք

շարունակ խաբէլէք, ուստի նախ ձեր խոստումները կատարեցէք, իրականացէ՛ք, ապա ես իմ պաշտօնս կը շարունակեմ, Բայց այդչափ քաջութիւն և հայրենասիրութիւն ո՞ր տեղից՝ Օրմանեանի մօտ :

Մենք հարկերին հարկեր համարված ենք որ Սուլթան Համիտ այս անգամ էլ սուտ խօսեց, ու իր հայ ժողովրդին աւած շնորհներին և ոչ մէկը իրապէս պէտք է գործադրվի : Ուրեմն ի՞նչ նշանակութիւն ունեցաւ հայոց պատրիարքի բողոքը. ոչ մի, բացի Եւրոպական թերթերին մի քանի սուղ նիւթ տալուց :

Շատ լաւ, Օրմանեան հրատարականը ետ առաւ Սուլթանին հաւատալով, իսկ եթէ Սուլթանը կրկին իր խոստումները չը կատարի, որը և հաւատալի է, վերջը ի՞նչ պէտք է տնի Օրմանեան :

Կրկին հրատարական, կրկին խոստումներ, կրկին վերագործ, առանց ունի արդիւնքի :

Այդպիսի դէպքում՝ Օրմանեանի ցածութիւնը և ստրկութիւնը ծայրայեղ կը դառնան :

Օրմանեանը իր երկրորդ վերագործողը աւելի ծանր վիճակի մէջ ընկաւ թէ հայ ժողովրդի դիմաց. թէ Սուլթանի :

Մի, երկու ամսից յետոյ՝ նա ստիպված պէտք է լինի կամ անձնասպան լինել, կամ թէ ամենակարող գիրք բռնել Սուլթանի հանդէպ՝ առանց պատրիարքութիւնից հրաժարվելու : Օրմանեան, եթէ իրեն համարում է ժողովրդի պատրիարք, պարտաւորված պէտք է լինի ժողովրդի հետ, բայց Սուլթանի դէմ անպայման կերպով ըմբոստ պատրիարք լինել :

Ժամանակ է որ Օրմանեան ըմբռնէ այս դառն ճշմարտութիւնը թէ՛ ներկայ պարագաներում հայ ժողովրդի շահերը և Սուլթանի արամադութիւնները միմիանոց արամադօրէն հակառակ են. և ինքը՝ իբր հայոց պատրիարք, պարտաւոր է կամ հայ ժո-

ղովրդի շահերը պաշտպանել, կամ Սուլթանի արամադութիւնները իրագործող գործիք դառնալ :

ՎԱՐԳՈ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. ՊՕԼԻՍ, 12 Մայիս

(Շար. նախորդ քիւիկ և զեղջ)

Իսկ «կարմիր կնիքը», իսկ մեր յեղափոխական ամբողջ կազմակերպութեան մը թէ Արթիւնը, թէ Օրմանին զրկած սպառնազրե՞քը. «եթէ վերագործար պիտի զարնենք, պիտի սպաննենք»... Աս սպառնազրիքը ես իմն աչքերովս տեսայ. ժամ մը ձեռքս մնաց, կարդայի, կնիքը քննեցի, չըլլայ թէ կնիքի մըն է : Մէկ կնիք չէին, Բայցայ թէ ինչ ճամբայով զրկած էին : Ե՛հ իմակ, սիրելի պարոններ, ի՞նչ պիտի րնէք : «Հրաժարվեք իմերմէ սպառնազրե՛ք պիտի ըսէ՞ք, թէ՞ «էսպէս յեղափոխական էք» ու պիտի գործադրէք ձեր խօսքը, ձեր «վճիռը» կը սպասենք : Չըլլայ թէ գուք ալ հաւատար զգաս անգամ Սուլթան պիտի գործադրէ իր խոստումները. ստախօսի միամիտ չեմ կրնար բնդունիլ յեղափոխական ամբողջ քամիթէ մը :

Հաւատա՞լ թէ ոչ. սպառնազրիքը զրկող բարեկամներու սողած խօսքերու կը ստիպեն զիս ատ հարցի վրայ կանգ առնել : Երեկ երեկոյ քանի մը բարեկամներ կը պնդէին որ կրնայ գործադրուիլ այս անգամ, սրով առաջին անգամ իսկապէս գրաւոր «իրատէ» չիկար, այլ միայն թահա՛մ պէյ բերանացի բար է Օրմանեանի թէ Վեհափառը «իրատէ րբա» աւ ու ան շնորհները, իսկ աս անգամ՝ գրաւոր, իբր նախարարական խորհուրդի «մաղապթա» իրեն պիտի երթայ և ինք պիտի ստորագրէ... ու աս վաղը Երեկոյ :

Նախ և առաջ՝ աս ամէն զեռ «պիտի» մէջն է, գալոց է, կըր-

նայ և չըլլալ : Արթիւն ու Օրմանի ձեռնառու է պնդել, որ անպատճառ պիտի ըլլայ. իրենք թերեւս երբէք չեն հաւատար թէ պիտի ըլլայ, բայց կըսեն, կաշխարհին համոզել ամէնքը, որ իրենք համոզուած են թէ պիտի ըլլայ... :

Իմ խորին համոզումս է որ կամ երբէք գրաւոր բան մը չի պիտի հրատարակուի և եթէ հրատարակուի, երբէք էսպէս չը պիտի գործադրուի :

Երկու գրաւոր աշխատութիւն. Ռուսական զեռպահանջները կառավարութեանը նոր կծու դիմում մըն է ըբեր, սրունի թը հեռուեալն է, «մեզի երկաթուղիներու առանձնաշնորհում մը տուիք, բայց ետքէն անակ պայման մը գրիչ մէջը, որ սուտ միջոցաւ տուիք : Չեք երկրի ամենէն բնդունակ տարրը կը հաւածէք, երթե՛կը ազատ չէք թողուր և նոյնիսկ մեր սահմաններու մէջ ապաստան գտածներուն ալ կարգիլէք վերագործար» : Աս է բովանդակութիւնը : Ի հարկ է նիքոյա Բ. իր քունը կտրած չէ մեզի համար հոգ տանելով : Հայերու խնդիրը հոս նորէն զէնք մըն է եղած երկաթուղիներու թողտուութիւնը իրենց ուղածին պէս առնելու :

Աս թուղթի պատասխանը Համիտ անձամբ յանձնեք է Արթիւնի գրելու : ու Արթիւն պիտի գրէ, պիտի ըսէ որ հայերու—իր ազգին վիճակը ին՞ստ աղէկ... Ի հարկէ աս ուտը առտերը չը պիտի կլլեն, բայց պիտի լռեն, եթէ երկաթուղիներու համար քիչ մը աւելի ձեռնառու պայմաններ առաջարկուին :

Աս առտական դիմումը կրնայ իբր ժամանակաւոր ճնշում մը ստիպել Համիտ և իր նախարարները, հայերը քիչ մը քիչ սեղմել երթե՛կի հարցի մէջ :

Երկրորդ գրաւոր աշխատութիւնը նորէն Համիտ յանձնած է անձամբ Արթիւնի : Աս աշխատութիւնը արդէն բուսական առաջ գացած է և Տիրան պէյ կտրուագրէ մարտը :

Համիտ կուզէ իր գահակալու-

Թեան 25 ամենակի առթիւ հրա- տարակելի առ յիշատակագիրքը, որուն մէջ կը համարուի իր ամէն բարենորոգումները, շինած մըզ- կիթները, բացած դպրոցները, ճամբաները, ըրած դրամական նուէրները ու ուղարմութիւնները և այլն: Կառուի որ իր օրով ել- բէք նոր պարտք չէ ըրուած, այլ եղած հանրային պարտքը 21—25 միլիոն ոսկիով քիչցուցած է այն և այլն: Իսկ ամենէն վերջ պիտի խօսուի «Նարդերու» մասին: Երա- ռայունները քիչ մը մեղաւոր են, ազգա են, շին հասկնար թէ ինչ- պէս պէտք է վարուիլ առանկ քնքուչ պարագաներու մէջ:

Ամբողջ դեռ ստոր վարգաց- ման վրայ է ֆանագիկոս, շի կրնար տարբեր ձեւով վարուիլ... Իսկ ամենէն մեծ մեղքը հայ- յեղափոխականներուն է որ զրգ- աեցին խուճանը այդ ցաւալի դէպքերը կատարելու:

Ու առ պիտի գրէ հայ մը, հայ սիրտ ունենալ ձեւացող ճատեան Արթին փաշան... Թիւ թիւ, խայտառակ մարդ: Ինչպէս պի- տի գրիչը շարժուի կարմիր գա- զանի մը նախամտածուած վճիռ մը նետել անմեղ ու սուրբ նահա- տակներու վրայ...:

Բայց Արթին պաշտօնեայ մըն է, արհեստաւոր մը, կը հրամա- յեն, պիտի բնէ, կամ քաշուի իր պաշտօնէն... նոյն միտքե- իր չը յայտնեց նաև Աշգեան, աւելի աղտոտը դեռ ևս, նոյնը և աւելի լկալի ձեւով շի գրեց Չոպանեան և: Ընկերութիւն...:

ԲԱԺ

ԲԱՅ ՆԱՍԱԿ

«Հնգուկի»

(Շար. Յարութի քիւիկ և ղերբ)

Այժմ անցնին յողուածագրին ու- փեստութիւնները և սուր փաստա- բանութիւնները ջրիկ և ցոյց տալ իսկական գոյնը, այն ծառայու- թեան: արժէքը, որ կուզէ մա- տուցանել Հնչակեան կուսակցու-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄՇՈՅ ԱՒԵՐԸԻ ԱՆՅԻՐ, ՊԱՏԵՐԱԶՄԷՆ ՅԵՏՈՅ, ՈՒ ՅԵՂԱՓՈՒՈՒԹԵԱՆ ԵՐԱՆՈՒՄ

ԺԷ

Մարգարը իր չուրջ դարձած այդ ամէն դաւադրութիւնները ու քու- թիւնները տեսնելով, այլևս պիւզա- կան կեանքի մէջ ապրելը իրեն վտանգաւոր համարելով հարկադրուե- ցաւ առժամանակեայ կերպով հեռա- նալ: միեւնոյն ժամանակ Մշոյ ընդ- հանուր առաջնորդ Կեր. Ներսէս Մ. վարդապետ Սարախանեան, Մարգարի այդ անկ կացութիւնը և կտաւա-

թեան, որիչ կուսակցութիւն մը արատաւորել ջանալով:

Սարգստի մէջ վերջերս անձանթ- ներու կողմէ սպաննուած Աւօր մա- սին գրեւով կըսէ. — Որքան որ, մինչեւ ցարդ, ո՛չ մի սրբական փառտ» կայ ապացուցանելու շարա- գործներ ռ'վքեր լինելը, այնու ա- մենայն «ամեն հանգամանք» ցոյց են տալիս, որ գրանք «յայտնի գոյ- նի հայ թշնամիներ» պիտի լինին:

Սարգստի մեր կողմէ եղած են: Տեսէք մեր Սղանը որքան չաւ փաստարան է, որ իրա բերնով՝ ապա- ցուցանելու սր եւ է սրբական փառտ» գոյութիւն չունենալը խոստովանե- լով հանդերձ, կուսեցնէ, (անչույա յայտնի գոյնի շարատարութեամբ) թէ գայն սպաննողները եղած են յայտ- նի գոյնի հայ թշնամիներ» (2) և լռելեայն գիտէք ինչ բնել կուզէ... այսինքն կուզէ հա. կցնել թէ «յայտ- նի գոյնի հայ թշնամիներ» Դաշ- նակցականներն են. այս մասին բնաւ տարակոյս չկայ, որովհետեւ Սարգստի հայ գլուզողներուն չէ կարող ըսել «յայտնի գոյնի հայ թշ- նամիներ»...:

«Ամեն հանգամանք» խօսքը նեղա- մատ թիւն է. պէտք էր ցոյց տալ այդ հանգամանքները, որպէս զի ընթեր- ղողները համոզուելին թէ սպաննող- ները իսկապէս «յայտնի գոյնի հայ թշնամիներ» (լռելեայն գաշնակցա- կաններ) եղած են:

Այս շարամիտ ակնարկութեանց կարող ենք նաև պատասխանել թէ՛ Աւօն սպաննողները գաշնակցակա- ներ լինելին և կազմակերպութեան որոշումով սպաննած լինելին, վար- նալու բնաւ կարիք չունէին. կու- սակցութիւնը լօսիթէն, ճակատքաց, կարող էր հրատարակել իր, «մահու վճիռը» Դոշակի մէջ, Իսկ Եթէ ան- հասներ են գործած այդ սճիրը, բնաւ տեղի չկար քողարկեալ խօսքերով ամբողջ կուսակցութիւնը մեղադա- ուելու:

Սակայն այս վերջին և նիթագրու- թեան ալ անհիմն բլրայուն փաստը, նոյնինքն Սղան մեղ կուտայ, հե- տեւեայ խօսքերովը, որ կըսէ— «Թըշ- նամիները անմիջապէս խմբուած են զիտի չուրջը՝ «կողոպտելու հա- մար»: — Պարզ է «յայտնի գոյնի հայ թշնամիներ» կողոպտելու համար չէր սպաննել «Երկրորդ» թէ՛ անհասներ լինելին: 15 ի չափ չէին լինիր, մէկ — երկու կամ առ առուելն ևրք թշնամիներ կարող էին միանալ այդ սճիրը գործելու համար, մինչդեռ Սղան իր բերնով կը խոստովանի որ— «և և հա մի անգամից որոտուեմ են

15 ի չափ հրագաններ զանազան թա- զուարի գիրքերից»:

Սղան նենգամտութեամբ և չարա- մտութեամբ դարձեալ կը զրէ— «Թըշ- նամիները հագուած են եղել քրտա- կան տարազով և ամբողջ կուսի ժա- մանակ առ մի ի օսք չեն խօսել», որպէս զի չհանչուցուին: Արեան «բաղ- մաթիւ հետքերը» և գիրքերի մէջ լնացած արխները ցոյց են տալիս որ թշնամիները կողմից ևս սպան- նուածներ և վիրաւորուածներ չաւ են եղել, բայց, ինչպէս երևում է, ամենայն խնամքով ծածկել, պահել են նրանց, իրենց ո՛վ լինելը չմտա- նուելու համար»: — Այս ֆրազներով Սղան կը ճգնի այնպէս ցոյց տալ թէ՛ իսկապէս սպաննողները «յայտնի գոյ- նի հայ թշնամիներ» (Դաշնակցա- կաններ) էին... Սակայն միեւնոյն ժամանակ ինքը իր խօսքով կը բրո- նուել, երբ կըսէ թէ «արեան քաղա- թիւ հետքեր» կան եղեր, արդ՝ ին- չուե համար այդ «հետքերուն» չը հե- տեւեցան, որպէս զի կարողանային գտնել սպաննողները: այդ հետքերը անչույա զի զին մէջ առն մը պիտի յանգէին և հաստատէին Սղանի ը- սածնելը:

Իարձեալ մի տեղ կըսէ «Այդ հա- մոզմունքը ունին Սարգստի ամբողջ հայ սպառնակութիւնը և այդ նրա համար, որովհետեւ տեղական թուր- քերը այնպիսի առաջուկութիւնն է- նելու անկարող մարդիկ են (2), և այլն»:

Այս, թուրքերը Աստուծոյ անմեղ գաւառակներն են... իսկ «հայ թըշ- նամիները» վաթ են այդպիսի առա- զակութիւնն ընելու... ծիծաղ կը լինի միայն մեր պատասխանը:

Աւօր անցնելը չենք պրպտել, և անոր յիշատակը չենք ուրի պրզ- ստրել, սակայն մ. եւնոյն ժամանակ ու, չենք կարող մենք զիւզ զսպել, յայտնելու համար թէ՛ Աւօն վերջերս «կատարեալ ալիկայ» ընէր էր գար- ձած, բայց ընդամեն իմաստով և Սարգստիներու գլխուն շար պա- տուհաս մը, և ահա այսպիսի սրի- կայի մը յիշատակին հոյեհանգիտելը կատարեն, անարգելու համար ճշմա- րիտ յեղափոխականներու յիշատա- կը... Ո՛վ գարք, ո՛վ բարք:

Եթէ Սղանի յօդուածին մէջ ճշմար- ստութիւն մը գտնել ուզենք, այն ալ միայն հետեւեալ պարբերութեան մէջ կարող ենք գտնել. «բայց անցան յե- զափոխական մասնակի շարժումների ժամանակը և քաշուեցան, հեռացան Սարգստից բոլոր ազնիւ և պարտա- ճանաչ յեղափոխականները (2), սա- կայն Սարգստեցի հայը չազատուե-

ցաւ «յեղափոխութիւնը չահագործող մի կարգ թափփութիւններից» Սա- կայն ամենայն իրաւամբ այդ թափ- թրփութիւններու կարգին մէջ պիտի գտնենք Ա. օն, Մուրատը (2) և Հ. ն... Եթէ ասոնք ազնիւ և պարտաճանաչ յեղափոխականներ էին, ինչո՞ւ հա- մար չը քաշուեցան չը հեռացան Սարգստէն, փոչուէս Սղան կը յայ- տարարէ...:

Եթէ Սղան ակնարկել կուզէ այդ սողերով Դաշնակցութեան արտաք- սուած մէկ քանի անհայտները, այդ խնդիրը բնաւ կապ չունենար կազ- մակերպութեան մը հետ, քանի որ այդ կազմակերպութիւնը ժամանա- կին իր տեղական կօթիթէին կողմէ պաշտօնակալ յայտարարութեամբ ամբողջ Սարգստի հայ ժողովրդին յայտնած է իր որոշումը և պատշա- ցուցած անոնցով:

Սղան կը փրփծուի ինչպէս թէ Սար- ցստի կրթական գործը «սասնակի սարխներով յետ է բնկել» այժմ Սարգստու մ չկայ ո՛չ մի հատ փոքր ի շատէր քարկարդ տաւ միտաւոր — և ոչ էլ փոքր ի շատէր ընդունակութեան — ցիչ»: Կարծես առաջ եղեր է և պիտի չկայ... մինչդեռ իրողութիւննե- րը ցոյց կուտան թէ այժմ Սարգստի մէջ կրթական գործը աւելի յաջող է, քան թէ Սղանի երոզած ժամանակը, այժմ կրթարանների թիւը աւելի շատցած են, բնորոշակ ուսուցիչներ աւելի մեծ թուով կան, Սղան քա- նաստեղծութեան բնորոշակութիւն ցոյց կուտայ, իրաւ կուտայ ինք ի- րեն, զէպքերը իր ակնոցի ապակի- ներովը ցոյց չի տայ, որ այնքան զօրաւոր են, որ մինչեւ անգամ խո- շորագոյնի գեր կարող են կատարել:

Սղան իր բանաստեղծական ներ- չընումը իր պագաթնակատիւնը հա- ցնէ, երբ կսկսի շարձակիլ առաջ- նորդին վրայ. այդ հանգամանքը նկատելի է նոյնիսկ Դաւրթուեմ, մա- նուաւնը վերջին թիւակալի Սահակ Այվասեանի օրքը, որ իր անեղիզ, անխելք վարժուեցող ոչ միայն զից անապշտորակաբն պատկեր, բլ Վեր- ցից փողովրդի աշխարհ գաւառներու թիւներով ձեռք բերած իրաւունք- ները...:

Կուզէինք իմանալ թէ անեղիզից թոնչ վարժուեցողները անեղից անապշտորակաբն պատկեր, ցցած էա- նայնպէս հետաքրքրիկ և փանապիթէ ո՞րք են այն գիրքուեղանքները, որ ժողովուրդը կորցրեց...:

(2) Ոչ Պոյաճեանը:

րուժեան դէպի Մարգարի բռնած թշնամական ընթացքն ի նկատի առ- նելով, գոնէ առժամանակ իր հովա- նաւորութեան ներքեւ պահելու հա- մար, 1889 թուականի վերջերք նա- մակաւ մը Մարգար վարժապետը Սուրբ Կարապետ կանչեց, զիւրա- մատչելի ամսականաւ մը, Սուրբ Կա- րապետի առաջնորդարանին գրադրու- թիւնը իրեն յանձնելով:

Մարգարը՝ որքան որ բացակայ էր գիւղէն, բայց և այնպէս իր յարա բերութիւնները կը շարունակէր, և իր խրատաւական նամակներով կը քաջալերէր իր խմբակն նպատակէն չի շեղուու համար, և այսպիսով քանի մը ամիսներ շարունակուելով, մինչեւ որ Վարդէնիսի 1890 թուա- կանի յունիս ամսոյ սկիզբներ պա- տահած նշանուոր դէպքը վրայ կեաւ, ու Բ. Դրան և Գ. զօրաբանակի հրամանատար Չէֆրին ցնցեց, և

36 աւուր մէջ մինչեւ 40,000 զօրք Մշոյ պաւառ լեցուեցաւ. հարկ կը հա մարիմք այդ դէպքն իր մանրամաս- նութեամբ մէջ բերել, ցոյց տալով թէ՛ Մշոյ և Պիթիւսի կառավարու- թիւններն ինչ զաւազգական խաղեր խաղային, իրենց դէպի հայեր ունե- յած ստոր միտումներն առաջ տանե- լու համար:

Ահա այդ դէպքի մանրամասնու- թիւնը: Վարդէնի գիւղի բէյի Լե- տին ձմեռը Մուշախէն գիւղի բէյի Գրիգորի աղջիկը իր տղուն կը նշանէ և Երկու ամիսներ անցնելով կա- մուսանցնէ. սակայն ըստ Մշոյ աշ- խարհի սովորութեան, զարնան աղ- ջկան կըրայրները կերթան իրենց քոյրը տուններին բերելու, մէկ եր- կու ամիս հօրը տունը մնալու հա- մար, և այսպէս մէկ երկու ամիսներ անցնելէ յետոյ, հարը բերելու հա- մար, բէյի Աւետիս տղան, չորս և-

րիտասարդ ևս իր հետ անմեղ Մուշախէն կուղևորին, հոն կը հաս- նին, և երկրորդ օրը հարը անե- լով ևս կը վերադառնան, Բայց քիւր- սպէր ասոնց երթովը լրտեսած էին, որպէս զի իրենց հին ոխերիմութեան վրէժը լուծեն, գոնէ այդ տեսակ ստոր և ամենացած միջոցով մը:

Վարդէնիցի երիտասարդները, անմեա քիւրս Արքեան գիւղը անց- նելով, Շամպը կը մտնեն. այդ միջո- յին խոտ հնձելու ժամանակ ըլլալով, հարկու հետքը քիւրսերը շամպի մէջ խոտը հնձելու լեցուած էին: Մուսա պէյի ամենէն լլխաւոր և սիրելին, և իր անուամբ յայտնի Արքեանը Հաւաքելով իրեն համար խոտ հնձելու էր բերած, միեւնոյն ժամանակաւ իր Մուսա պէյի անցեալ անխեղի վէրքին, գոնէ թիթեւացում մը ա- ռաջ բերելու, իր գաղանային կատա-

ԿԵՂԾՈՒԱԾ ՉԱՅՆԸ

Ես ալ հասարակութեան այն գաղափարը կը ճանչցայի՝ իմ գիրքով, իմ վիճակով, իմ խորհրդով, գաղափարով եւ իմ կենցաղով: Ինձի ալ անծանօթ չէ այսօրուան հայ ժողովուրդին քաջամարտիկ, լինելու պատրաստութեամբ ընդունակութեամբ չունիմ: Բայց այս քաջութեան կը հասկնան զիրար ու մէկզմէկու հոգեկան ցանկութեամբ կը ճանչնան: Այդ ախար մեր գրականութեան անձնակազմը ցած ճիւղն է, հայրենիքի հողէն տարագիր, իր սիրելիներու կորուստով ու կակիծով դառնացած հայութեան հարազատ զաւակ մը քաջամարտիկ քիչեր կը ցած են զգալ և զայն պարզ, յստակ ու ազատ ոճով գրի առնել: Իսկ երբեմն ոչնչացանք ժողովրդի բանաստեղծներ, անոնց ցաւերուն թարգման եղբայրներ, բայց անոնք իրենց ժամանակի ժողովրդի ախարատայտեցին, իրենց ժամանակի ժողովրդի ցաւը գրեցին ու այդու առիթի աղբու ոճով, ուժեղ հոգեով արտայայտող մը պէտքը չգտալի դարձուցին:

Այսօր հայ ժողովրդի ցաւը անտանելի չափերու հասած՝ անոր ներսիքին կը մխայ, ամէն վայրկեան ախար քաշէ, իր ցաւերը առիթի ճանչցող, գիտցող իր սրբատուն, իր հոգեւոյն ձայնին արձագանքող շատ ու շատ պէտք ունի: Բայց, ցաւալի է, անոնք որ ժողովրդի ցաւերը գրողներու նախանձու մը ցաւակիցներ, ժողովրդի ցաւերու ընդմիջ չի ճանչցած վայրկեան մը, ժողովրդի կեանքովը չը հետաքրքրուած անչափ մարդիկ ժողովրդի ձայնը գրելու կը յարակնին: Ժողովրդի ներկայութեան անպատկառութեն ժողովրդի անունով այնպիսի խօսքեր կը ընեն, այնպիսի ցաւ յայտնելու եղանակ մը ունին: Այնպիսի կոչեր կը ընեն որոնք ժողովրդի խօսքը չեն, որոնք իր

անունով խօսուած ըլլալուն համար ժողովուրդը կը զայրանայ, որովհետեւ անոր ցաւերու ընդմիջ չունին, ժողովրդի կոչի դրոշմը չեն կրեր:

Սներսութեան հասած ժողովրդի անունով կը խօսին, կը գրեն՝ կարծելով թէ ամէն իրաւունքի սրբապղծում ու դաւաճանութիւն աննկատելի կանցնին պարզ ժողովրդի կոչմէ: Բայց չարաչար կը սխալին ժողովուրդը գիտակից իր վիճակին, ուժ վերջգնալու, ապրելու ջանքով ինչ որ պէտք է անոր վրայ կեդրոնացուցած է ու շարունակելու: Իր ձայնը իր սիրածին ու իր ճանչցածին տուած է, չարժող մարդու կեանքու խառնուրդը, զրամենրուն կարեւորութիւն շտար, ամէն խօսք ըսողին արժանիքին չափովը կը գնահատէ: Իրաւունք լրացնել խմբագիրը՝ ժողովրդի «կեղծում» ձայնովը ժողովրդի լուծիւնը ու զէպի այդ անշահ մարդու կեանքը անեցած արհաւիրումներ խմբագիրը իր անելիքները ժողովուրդը համար պարտած ժամանակի զգաց իր զէմը կը լլու հայէն իր թերթին ունեցած անչափ ուղղութեան մասին, լրբ համակրութեան նշան ցուցուցած ու ընդունած է, սրուն համար թույլ տուէք Պ. Վարդո՞ գէթ անգամ մը գրել թէ՛ Իրաւունքի խմբագրին գրած ժողովրդի ձայնը՝ Քէօտտէնձէյի պէս հայաշատ յազարէ մը ժողովրդի ձայնը չէ, այդ ձայնը իր սեփական ձայնն է, ամէն հայ որ ժողովրդի հարազատ զաւակ է, ժողովրդի ձայնը կը ճանչնայ ինչպէս զաւակ մը իր մօրը ձայնը, այդ կեղծումը ձայնը ազատութիւն մէջ իր թերթին միջոցով հնգ կախար մը ձայնն է որ շնորհ ու շատ կը նմանի Իրաւունքի խմբագրի ձայնին: որովհետեւ ժողովրդը «խղափոխականներու փարա մի տաքի շեշտը ու իր կուսակցութիւնները տապալելու նոր կուսակցութիւն մը ստեղծելու պէտք է իր յանկերգը սերիչ առթիւ ալ լսած

ենք Իրաւունքի խմբագրէն:

Իրաւ է թէ Իրաւունքի խմբագիրը ստելու, կեղծելու, խեղաթիւրելու մէջ հոշակ ունի, բայց ժողովրդի ձայնը գէթ մէկ անգամ լսած չըլլալուն՝ շատ անճարակ կեղծող դուրս եկած է: Այս անգամ ժողովրդի ձայնը և ոչ մէկ ձայնի կը նմանի, անոր ձայնը ջրվէժներու ձայնէն ազնայտոյ է: Եթէ Իրաւունքի խմբագիրը ժողովրդի ձայնը լսած ու ճանչցած ըլլար՝ երբէք պիտի չը յաւակներ ժողովրդին ձայնը կեղծելու համարակութիւնը ընել: մտնաւանդ յեղափոխական ժողովրդի մը ձայնը, սրն որ իր անունով կեղծող, իր վարձը շահագործող, իր զգացումները խեղաթիւրող և իր ազատութեան վաղքը վրիպեցնող ապուշները, յաւակնորսները պապանձեցնելու, արհամարհանքի մատենելու կոչումը ու գերը ստանձնած է:

ՅՈՒՆ

Քէօտտէնձէ, 7 Մայիս

ԳԻՄԱԿԱՆՈՐ ԽՄԲԱԳՐԻՆ

«Կիրքի և սուտի ապտոտ օտկանիդ» վերջին թիւին ու շահագրգիռացայ: Իսկ եմ որ գտնէ լմ մարակներս ազգեր են հատկապէս ինուդ: Իսկ ալ համոզուել էք որ անիրաւ տեղը ձեզ մարակելու չեմ գիշտիր: Ես ալ տեսնելու, ձեր եղական յաւակութիւնն է մէկու մը գէթ կազկանձելու համար անոր անձը ճանչնալու, լսածելու լրակատար ցածու թիւնը քունկ միջոց մի վախնաք, ինձմէ նի թողան շահ մը չունիք: . . . Իսկ իմ անունս ձեզ ծանօթ ըլլալու համար մէկ բանէ կը վախնամ: Գեւ եւս ընէք. . . Եթէ այդ բան հետաքրքիր էք իմով ըլլալս զիտայտու, բոսմ ուրեմն թէ, հայ մըն եմ ասող ամէն գիմակաւորներ և անոնց դաւաճանութիւնները մերկայանելու միջոց մտադիր, ոչոնք բան գործ ըրած են միամիտ ամբոխին

Անփաստ հայտնութիւններ են ասոնք, որ միայն արժանի են հայտնաբերուող տարրերու մէջ — Թիֆլիսի նոր-Դարի և Պոլսոյ Բիզանդիոնի մէջ իրենց տեղը ունենալ եւ ոչ կուսակցութեան մը օրգանը կողմ չընելու թերթին մէջ . . .

Այսօր ճշմարիտ է Սրբազան անաղ-նորքը պատելու չունիմ — միմիայն Սրբազանի և իրեն նման անհատներու մօտ: Ժողովուրդը իր համակրութեան եւ յարգանքին լիովին և բացարձակ ապացոյցը ցոյց տուաւ առաջնորդին երբ այս վերջինը թիւնակոյտ արցունքով լեցնելու Գեորգի վերադարձաւ ամբողջ հայ հասարակութիւնը Սրբազանին անաղ գնաց մինչեւ 2 ժամուան ճանապարհ եւ մեծ փառքով ու պատուով զայն անաղ-նորքարան անաղնորդից: Եւ այս ցոյցը, համակրութեան այս ապացոյցը ճանր ապտակ մը եղաւ Սրբազանի անձնական թշնամիներուն: Անիկէ առ իրեն մի քանի նմաններուն: Երբ իր զգրութիւնը կը խօսի, գրպարտող գրիչներ ինքնին լսուածին կը դատապարտուին:

Ժողովուրդը բնաւ կ'ըմբռնէ չէ որ զրքած եւ չէ պահանջած անաղնորդին հեռացումը: Սրբազանի անհատի գտնէ շուրջ պատրուի ու զած լինին, սակայն չեն յայտնուած, մի միայն իրենց անձնական թշնամուկան և անտեղութեան գոհացում առլու համար, և ոչ թէ ազգային շահերը ի նկատի ունենալով:

Վերջին խօսքը և նոյնիսկ Սրբազանի խօսքերով ըսենք — այս տխուր հանգամանքները մասնաճիւղ ընեն յետոյ ազգին չեղափոխականներու եւ յեղափոխութեան վարիչ մարմիններու վրայ անհրաժեշտ պարտք կոչ օրբան կարելի է չընտով արմատական միջոցներ ձեռք առնելու և օր անաղ հեռացնելու յեղափոխական կազմակերպութիւններէն ս յն թուր կազմակերպի անցնելու եւ ներկայ ունեցողները, որոնք, իրենց անարդ գոյութիւնը պահպանելու համար կը շահագործեն հաւատարմութիւնը սակցական գոյութեան թէ յեղափոխութեան հետեւին: (աւելցուցէք կանանց բարեգործական ընկերութիւնը, որ շատ քիչ քանակով անաղնորդի անունով գործարար է: Եւ այս անգամ իր կարծեաց, ժամանակը եկած հասած նկատելով, ամենայն պատրաստութեամբ, այն կողմէն այդ քաջարի երիտասարդներու անցնելու լուրն առնելով՝ շուտ ընդ փոյթ ձի նստելով անաղնորդ կանանցի և քիւրտերը իր ետեւէն մօտենալուն պէս նախ և առաջ հայ երիտասարդներուն հրաւիր կը կարգայ հարմանակութեամբ կը ձգտի նախ և առաջ հարմար սիրանալ և ապա միջոցներու հետ արթնելով արմատացած պիկետիստութեան և վրէժի հաշիւները մտքորել:

զուգորդները, և միանգամայն իր գարեջրի կրկն յազուրդ տալու համար անցնել չորս հինգ վարդերիսցի երիտասարդներու անաղքն, անոնց սպանելու, իսկ հարսն անժամանակ հայ ձեւով իւրացնել միտքը դրած էր: Եւ այսպէսով օրեր սպասելով մինչեւ որ ըստ իր կարծեաց, ժամանակը եկած հասած նկատելով, ամենայն պատրաստութեամբ, այն կողմէն այդ քաջարի երիտասարդներու անցնելու լուրն առնելով՝ շուտ ընդ փոյթ ձի նստելով անաղնորդ կանանցի և քիւրտերը իր ետեւէն մօտենալուն պէս նախ և առաջ հայ երիտասարդներուն հրաւիր կը կարգայ հարմանակութեամբ կը ձգտի նախ և առաջ հարմար սիրանալ և ապա միջոցներու հետ արթնելով արմատացած պիկետիստութեան և վրէժի հաշիւները մտքորել:

Իսկ միւս կողմէն, հայ երիտասարդներն անոնց այլալման պաղարկանութեամբ մը հարսն իրենց անհատներու անցնելով կը հրաժարեն իրեն որ ձին վազցնելով իրենց գիւղը արդեն իր թայ, որ մէկ ժամ հեռուարութեան վրայ կը զբաղուի իսկ իրենք դառնալով կուս կը բռնուին: Կուս մէջ ամենա վստահաւոր տեղէ մը կը վերաբորուի այդ գազան Հասընոն, որ ժամանակին հարիւրաւոր անտեղ արիւններ զոհած էր, միևնոյն ժամանակ այ Հասընոյի ամենէն սիրելի ընկերներէն երկուքը կը սպաննուին: Հրացաններու ձայնէն, շուրջի մէջ խոտ հնձող ջիւրահերը եզմալով այդ կուս կողմը կը հաւաքուին, իսկ միւս կողմէն անաղնորդ հաւաքուողներն, Հասընոյի և իր ընկերներու մէկէն ի մէկ ինչպէս անտեղով տար ստիպար եղած, կամայ կամայ կծիկը

զնեղով ես կը քաշուին, վախնալ վ որ իրենք ևս Հասընոյի պատժոյն պիտի արժանանան, եթէ քանի մը վայրկեան ևս յամառին հոն սպասել, իսկ հայերը միմիայն մէկ զոհ տալով կաննետանան:

Հասընոյի զարնուելուն լուրը կայծակի արագութեամբ քրտայ մէջ տարածուելով, ամէն մէկ քիւրտ իր անձնական գործերին ձգելով, ստիպ ցգլուխ գինուած գէպի Սղրենիս Հասընոյի գիւղը վազել սկսաւ: Մուտս պէյի մը հեռացուին, նամանաւոր Հասընոյի և իր ընկերաց նման արդեն իսկներու ձեռամբ վնասուին իրօք որ անբուժելի ցաւ մը կը պատճառուի: Կարելի չէր այդ տեսակ նախատիքի մը հանդուրժել, այլեւս քրտայ համար մահ էր որով մտնուին սուղի նախամեծար կը համարէին շահ թէ երէկուան ստորուկ ֆէլլայի մը ձեռքով այսպէս յաղորդարար ի-

րենց այն ամենէն առելի քաջ և տեղեցիկ մարդոց խրոխտաբար սպաս համարձակ սպաննուելը տեսնել: Եւ անպայման ասոր գարժանի մտտին խորհիլ սկսան: այդ հաւաքուած 600 հոգիներէն նշանաւոր ազգեցիկներն արտակարգ ժողով մը կազմեցին երկու կէտի վրայ խորհելու: Թէ ինչ ընել պէտք էր, նախադարձա՞կ ըլլալ: Թէ ոչ կառավարութեան տեղեկութիւն տալ, և կառավարութեան ուշադրութիւնը ևս այդ բանի բանի վրայ կեդրոնացնել: հակառակ պարագային եթէ կառավարութիւնը այդ հարցի գէ՞մ ևս բուժելու պահելով պաղ ձեւով վարուի գէպ այսպիսի ճանրակչիւ հարց մը, այն ժամանակ ամենայն պատրաստակամութեամբ շրջակայ եղած աշխարհի քիւրտերն միահաւանութեամբ այդ գիւղի վրայ հարկ է քաշել և մոխիր դարձանել գայն իր շրջակայներով մէկտեղ:

ԻՄԱԿԱՆ ՅԵՎԶԱՆԵՍԵԱՆ (Շարունակելի)

զգացումները շահագործել, առ- մէն արարք, վատութիւն կամ անբարոյականութիւն, «արգու- րութեան ձայն», «իրաւունք», «ազգային շահ» մտկոյի մը կրտսելով, խնդիր չէ թէ ձեր «Ֆալսիտիան» բանձարին շնոր- հիւ, իմ անձս գիտէք եղեր, որ, ապահովարար հազար անգամ բարձր է ձերինէն, որուն ո՛չ ոք կրնայ կտակած իւր իսկ ձեր արեւ- բահաչակ անցեալն ու ներկան արտասահմանի բովանդակ մա- ղուր տարրին ծանօթ է. ուրեմն ի՞նչ կարծէ կազկանձումները պա- տուաւոր և լաւ խորհոյ հայու մը քով: Կարծեմ գեռ Տօքթ. Աթա- բէկեանցի բարոյական ապսակին տակ կը գալարուիք. ուստի և շարունակեցէք ատեն մըն ալ ձեր... ութիւնները... Կըրչ... Ահա վրըջին խօսք ձեզի:

ԲԱՋԷ

ԲԱԺԱԿԻ ՄԷՋ ՓՈԹՐԻԿ

Անցեալ օր հայերէն «Հոգու- գիրն» մէջ յօդուած մը կար վառ- նայի «երկուս որբախնամին մաս- նակցող» ստորագրութեամբ, որ իբր թէ պատասխանէր Բազէի այդ առթիւ գրածին:

Արշապէսի յայտնի է վառնայի «Վասպուրականի» Արքայինամ ընկերութիւնը քանդելու ոչ ոք միտք ունեցած է և ձգտում: Եւ եթէ քանդուի ալ, մեղաւորները իրենք կազմող և հաստատողնե- րը են, որովհետեւ իրենց գոր- ծը խարխուլ հիմնու վրայ գրած են. այստեղ չենք ուզեր ման- բաման բացատրութիւններու մէջ մտնալ և ոչ կարեւորութիւն տալ այդ յուզեալ ու խռովեալ մասնակցողին զառանցանքնե- րուն, որովհետեւ այդ պարտին կարծիքով եթէ հաստատութեան մը համար նկատես թէ այսպէս ըլլար կամ այնպէս՝ կը նշանակէ մտածել քանդել. կրքերու զոհ գարձած ապուշի մը արամագրու- թիւն է այդ: «Հոգուգիրն» յօդ- ւածագիրը, այդ հայրենասէր-որ- բասէրը որը աղտոտ ակնարկու- թիւններով արիշները կուզէ մրտել, կը ջանայ համոզել թէ որբախնամները ամեն կողմակեր- պութենէ սրբազան են: Պարոն հայրենասէր և որբասէր, թոյլ տուէք մեզի ամենայն խոնարհու- թեամբ յայտարարելու թէ՛ դուք «որբախնամութեան» և ո և է զոհո- զութեան մասին զազափարը ոչ ունեցած էք և ոչ ալ պիտի ու- նենաք: Այսպէս կը կարծեմ և կը եղբակացնեմ ձեր գրուածքը կարգալէն, որովհետեւ պատիւը չուենիմ ձեր հայրենասէր և որ- սրբասէր սիրտը ճանչնալու, որը կրնայ շատ սեւ ըլլալ: Ասանկ անտեղի յուզումները՝ որոնք տե- զի կուենան փոքրիկ սպաի մը մէջ, կը կոչուին «բաժակի մէջ

փոխարկ» որու միջոցին ճանճն անգամ չի խեղդուիր: Արքա- խնամ մարգը կրքէ շատ հեռու պիտի մնայ, պարոն, սրբազնի- իր սրաշտօնը լաւ կատարէ. և այն որբախնամը՝ որ սիրով և յանձն առած է այդ սուրբ գործը կրքով կը կատարէ. խկապէս հայը ջարդող թուրքերէն ալ վատ է և ցած... Կը հասկնա՞ք... ԶԻՒԷ

ԹԱՏՐՈՆ «ՍԱՆԻԹՐԱԿ»

Ընթերցարանի բրիտա- ստրգներու կողմանէ պիտի արուի ի նպատակ ընթերցարանի, այս գիշեր 20 Մայիս ժամը 9 1/2ին: «Էռքրեցիա Պօրճիա» թատերա- խաղ 4 արարուած և զատելու 1 արար:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Սուլթանը իրաւէով մը հրա- մայած է Պօլսոյ մէջ համալսա- րան հիմնել որ երկու բաժին պի- տի ունենայ՝ գիտութեանց և ար- ուեստներու:

Թուրք մամուլը քանի մը մա- մանակէ ի վեր սկսած է երկար զովասանական յօդուածներ հրա- տարակել Սուլթանի անձնապէս թուրքիոյ համար ըրած զոհողու- թիւններու մասին:

Եգիպտոսի թրքական քօ- միտէր՝ Մուխթար փաշա սուանց Սուլթանէն հրաման ուղելու Ե- րոպա անցած է: Մուխթարին այդ քույր մեծ յուզում յառաջ բերած է երկար լին մէջ:

Վիէնայի քաղաքական շըր- ջանակներու մէջ մեծ կարեւո- րութիւն կուտան Գերմանիոյ, Անգլիոյ և Աւստրիոյ Պօլսոյ գե- սպաններու զինուորական կցորդ- ներուն ընկիւք ճամբորդութեանը թուրքիոյ Ասիական և Եւրոպա- կան նահանգներուն մէջ:

Այդ ուսումնասիրական ճամ- բորդութիւնը որ թուրքիոյ պիտի օգնէ անհրաժեշտ բարենորոգում- ները մտցնել Հայաստանի, Ալ- պանիոյ և Մակեդոնիոյ մէջ, և- զամ է Գերմանիոյ նախաձեռնու- թեամբ արեւելքի մէջ խաղաղու- թիւնը հաստատ պահելու հա- մար:

Գլխամար Աւստրիոյ զինուորա- կան կցորդը շայտատար զրկուած է, իսկ Գերմանականը՝ Ալպանիա և Մակեդոնիոյ որպէս զի միմիայն Անգլիական և Աւստրիական զի- նուորական կցորդներու ներկա- յութիւնը կատակածներ չը յարու- ցանեն Ռուսիոյ մէջ:

Վիէնայի մէջ կը յուսան թէ զինուորական կցորդներու այս ճանապարհորդութիւնը խիստ մը պիտի ըլլայ թուրքիոյ համար իբր Ասիական և Եւրոպական նա- հանգներու մէջ բարենորոգում- ներ մտցնելու:

Լօրտ Բօպէրտս Մէյքի-կինկը պաշտպանող գնդապետ, այժմ

ժէնէրալ Պատէն առաջարկած է երթալ Անգլիա հանդուստանալու, սակայն վերջինս պատասխանած է թէ՛ ինքը կը գերադասէ շա- րունակել մասնակցել պատերազ- մին:

Փրանսայի մէջ կրկին Տրէյ- ֆուսի դատը վերաքննելու յոյսներ կան: Այդ խնդիրը կրկին նիւթ դառցած է երեւոյթանական մո- ղովին մէջ:

Ռուս կառավարութիւնը վար- սովիոյ մէջ ելած գործաւորական ցոյցին պատճառաւ ձերբակալ- ուածներէն 542 հոգի պատժած է հետեւեալ կերպով:

11 հոգին՝ որոնցմէ երկուքը ուսանողներ են իսկ մէկը կին մշտական ամսականիւր աշխա- տանքի գատապարտուած են Սի- պերիոյ մէջ:

70 գործաւոր, 33 ուսանող, 4 կին և մէկ բժիշկ երեք տար- ուան աքսորի ի Սիպերիա:

190 գործաւոր, 95 ուսանող, 19 կին դատապարտուած են բան- տարկութեան մէջ տարիէն մին- չեւ շորս ամիս:

Ամենահարուստ լեզուն է Անգլիերէնը որ ունի 250,000 բառ, յետոյ գերմաներէնը 80000, իտալերէնը 45000, ֆրանսերէնը 30000, սպաներէնը 20000:

Արեւելեան լեզուներէն ամե- նահարուստը արաբերէնը է:

100 միլիոն ժողովրդէն աւելի անգլիէրէն կը խոսի, 60 միլիոն գերմաներէն, 41 միլիոն իսպա- ներէն 41 միլիոն ֆրանսերէն և 34 միլիոն իտալերէն:

Սպանիայի մէջ ժողովուրդը մեծ յուզումի մէջ է. 49 նա- հանգներու և 60 մեծ քա- յաքներու մէջ ինչան ցոյցի՝ բո- լոր խանութները փակուեր են մայիս 11ին: Ժողովուրդը լու- սամուտներէն և պատշգամներէն հրացան արձակեր է ոստիկան- ներու վրայ: Ետ քաղաքներու մէջ քաղաքացիները կը հրաժա- րին սուրբը վճարել: Սպանիոյ մէջ յեղափոխութիւն կը սպասուի:

Ա Ջ Դ

Ընթերցարանի դասախօսու- թիւններն սկսած են. ուսանիլ փափաքողները կարող են միշտ երթալ հսկող պաշտօնեային քով արձանագրուիլ:

Պուլկարերէն և ֆրանսերէն լեզուներով կը թարգմանուին և կը գրուին փոքրիկ փոխարժէքով ամէն տեսակ նամակներ և գրու- թիւններ վառնայի ընթերցա- րանի մէջ:

Մ. Ջ. ի հրատարակած Հոյա- սուն և Թոթովմուք անուն գրք- քոյկներու հասոյթը նուիրած է հեղինակ տեղւոյս ընթերցարա- նին:

Կը ծախուին վառնայի ընթեր- ցարանին մէջ:

Ընթերցարանը Ձորեքշաբթի օրերը յատկացուած է կիներու:

—)(—

Հ. Ս. ԷՓՐԻԿԵԱՆ
Բնաշխարհիկ քառուսան 1900 Վե- նետիկ Ս Ղազար: Լոյս տեսած է այս բնագրածկ գործին առաջին յսան- թերթեան պրակն, որ կը բողկանայ 160 երկսերէն էջերէ և գորգարուած է 80ի չափ խնամաւոր պատկերնե- րով: Կը պարտաւորէ մեր երկրի նա- հանգաց. գատներու, քաղաքնե- րու, վանքերու, գիւղերու, գետե- րու, յիսներու և այլ նշանուոր սեղեպ վրայ, աշխարհագրական, պատմական, հնախօսական և այլ կարեւոր օգտակար տեղեկութիւն- ներ: Առաջին պրակի գինն է ճանա- պարհի ծախքով 3 ֆրանք կանխիկ, Հասցէ՝
direction de l'Imprimerie arménienne
St Lazare Venise

Ա Ջ Դ
Շարժումի խմբագրութեան մէջ կարելի է բաժանորդ դրուիլ Փարիզ հրատարակուող «Հայկական ժողով- լրագրական երկերի հաւաքածոյին»:
Պուլկարիոյ համար պայմանները՝
Տարեկան 6 գիրք 32 ֆրանք
Կարելի է մաս մաս վճարել:
Ա. գիրքը ստանալուն 12 ֆրանք
Բ. գիրքը ստանալուն 10 ֆրանք
Գ. գիրքը ստանալուն 10 ֆրանք
Ամէն մէկ գիրքը ստանալին 6 ֆրանք

«ՇԱԻԻՂ»
Շարիկ ձեռքէ չի ծախուիր: Բաժ- նեկներն է՝ Պուլկարիոյ համար 10 ֆրանք, արտասահմանի համար 12 ֆրանք, Ամերիկայի համար 2 1/2 սո- վոր:
Հասցէն՝
Rédaction de la revue «Chavigh»
pensionnat Arménien
Varna

ԸՆԴԱՐՁԱԿ ԵՐԿՐԱՐՆԸ
ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՄ ՀԱՒԱԿԱՅԻՅ
Հին և նոր Ազգ. երգերու գին 2 ֆր- սոյն երգարանը կը ծախուի վառնա- Ա. Ջարպանէլեանի գրատունը նաեւ կը գտնուի ամէն տեսակ գրքոցակ և վիպական գրքեր. դրամի փոխա- րէն կընդունի նաեւ նամակագրոյմ: Գնում և վաճառում ամէն տեսակ գործածուած նամակագրոյմներու:
Նաեւ Շարժումը կը ծախուի Ա. Ջարպանէլեանի գրատունը և խը- բագրութեանս մէջ:
Նոյնպէս Շարժումը կը ծախուի Մուսայրա Ա. Գարուեսֆի խանութը:

ԽՊԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՇԱՐՇՈՒՄ»
Կը սպաղրուին ամէն լեզուէ այցեւոմն, հասցէւոմն, նամա- կաղլուխ, հարանեկան հրաւի- րողիւր, մահաղը:
Գինները յոյժ գիւրամատչելի- Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշգրե- թեամբ և փութով կը կատար- ուին:
Բն. Ջ. ԱՐԱՐՈՒԹԻՒՆԵՐԸ Կ ՆԻՒԻՒ
Цена книг «Врачимость» Варна